ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԹԻՎ 28 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 28-ի հերթական նիստի օրակարգի հաստատելու մասին:

2.ՀՀ Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 31-ի թիվ 16-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>>, 2017 թվականի մայիսի 31-ի թիվ 17Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

3 .Համայնքային սեփականություն համարվող հողամասն աճուրդով օտարելու մասին :

4. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

5. ՀՀ Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 7-ի <<Ակնաշենի համայնքապետարանի աշխատակազմի և մշակույթի տան աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 40 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

6. Համայնքի թվով 14 /տասնչորս / սոցիալապես անապահով բնակիչների դրամական օգնություն տրամադրելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

28սեպտեմբեր 2018թ

թիվ 28 Ա

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել 2018 թվականի սեպտեմբերի 28-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
Զ. Արշակյան			
Գ. Հովհաննիսյան			
Է. Մովսիսյան			
Ա. Գևորգյան			
Գ. Խուրշուդյան			
Ա. Հովհաննիսյան			

Համայնքապետ՝ Մ. Միսակյան

2018 թվական
սեպտեմբեր 28
Գ. Ակնաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

28.սեպտեմբեր 2018թ թիվ29 Ա

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԽՆԿՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի ԹԻՎ 16-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>,2017ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի ԹԻՎ 17-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 31-ի թիվ 17-Ա որոշման 4-րդ կետի հավելված 2-ում կատարել հետևյալ փոփոխությունները՝
Խաչիկ Վազգենի Հովակիմյան բառերը փոխարինել Անի Սուքիասի Ենոքյան բառերով, Լուսինե Համլետի Հովհաննիսյան բառերը փոխարինել Արաքսյա Ալեքսանի Ավագյան բառերով :
2.Որոշման 5-րդ կետի Խաչիկ Վազգենի Հովակիմյան բառերը փոխարինել Անի Սուքիասի Ենոքյան բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
Զ. Արշակյան			
Գ. Հովհաննիսյան			
Է. Մովսիսյան			
Ա. Գևորգյան			
Գ. Խուրշուդյան			
Ա.Հովհաննիսյան			

Համայնքապետ՝ Մ. Միսակյան

2018թվական
սեպտեմբեր 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

28 սեպտեմբեր 2018թ

թիվ 30 Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածով ,<< Հրապարակային սակարկությունների մասին>> << օրենքի 5-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1852 Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Աճուրդային կարգով օտարել Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի սեփականություն համարվող մերձարաքսյան գոտու <<Սահման>> հանդամասի 04-005 -0189 -0040 ծածկագրի 0.2 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը:
2. Օտարվող անշարժ գույքի՝ հողամասի համար մեկնարկային գին սահմանել հողի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 11440 / տասնմեկ հազար չորս հարյուր քառասուն / << դրամ:
3.Աճուրդային մեկ քայլը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 5%- ի չափով՝ 572 /հինգ հարյուր յոթանասուներկու/ << դրամ:
4.Աճուրդի հրապարակայնությունն իրականացնել օրենքով սահմանված կարգով:
5.Առաջարկել համայնքի ղեկավարին սահմանված կարգով իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթներ:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
Զ. Արշակյան			
Գ. Հովհաննիսյան			
Ա.Հովհաննիսյան			
Է. Մովսիսյան			
Ա. Գևորգյան			
Գ. Խուրշուդյան			

Համայնքապետ՝ Մ. Միսակյան

2018 թվական
սեպտեմբեր 28
Գ. Ակնաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

28 սեպտեմբեր 2018թ

թիվ 31 Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի » 7-րդ հոդվածի 2-րդ մասով հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված<<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 10.09.2018թվականի թիվ 5 դրական եզրակացությունը >. և համայնքի բնակիչ Միսակ Միսակյանի դիմումը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.<< Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի վարչական սահմաններում ընդգրկված համայնքի սեփականություն հանդիսացող 04-005-162-005 ծածկագրի 2.5495 հա հատուկ նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել գյուղ. նշանակության 4-րդ կարգի վարելահող,որից 0.67 հա հողամասը ըստ հատակագծի համարել քաղաքացի Միսակ Միսակյանի ընտանիքի սեփականություն ,ըստ Ակնաշեն համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 1991թ ապրիլի 04-ի թիվ 06 որոշման :

2. Համայնքապետին օրենքով սահմանված կարգով իրականացնել սույն որոշման առաջին կետից բխող գործառույթներ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
Զ. Արշակյան			
Գ. Հովհաննիսյան			
Ա.Հովհաննիսյան			
Է. Մովսիսյան			
Ա. Գևորգյան			
Գ. Խուրշուդյան			

Համայնքապետ՝ Մ. Միսակյան

2018 թվական
սեպտեմբեր 28
Գ. Ակնաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

28 սեպտեմբեր 2018թ

թիվ 32Ա

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի<< ԱԿՆԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՅԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>ԹԻՎ 40 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Ակնաշենի համայնքապետարանի առաջատար մասնագետի /ծածկագիր3.1-1 /դիմումը և համայնքապետի առաջարկությունը .

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1Ակնաշեն համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 7-ի <<Ակնաշենի համայնքապետարանի աշխատակազմի և մշակույթի տան աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 40 որոշման մեջ կատարել փոփոխություն համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
Զ. Արշակյան	_____	_____	_____
Գ. Հովհաննիսյան	_____	_____	_____
Է. Մովսիսյան	_____	_____	_____
Ա. Գևորգյան	_____	_____	_____
Գ. Խուրշուդյան	_____	_____	_____
Ա.Հովհաննիսյան	_____	_____	_____

Համայնքապետ՝ Մ. Միսակայն

2018թվական
սեպտեմբեր28
Գ. Ակնաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

28 սեպտեմբեր 2018թ

թիվ 33 Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 14 (ՏԱՍՆՉՈՐՍ) ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի թվով 14/ տասնչորս / բնակիչների դիմումները , համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի զեկուցագիրը համայնքի ավագանու առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի եզրակացությունը և համայնքապետի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տրամադրել դրամական օգնություն համայնքի թվով 14 /տասնչորս/ սոցիալապես անապահով բնակիչներին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
Զ. Արշակյան			
Գ. Հովհաննիսյան			
Է. Մովսիսյան			
Ա. Գևորգյան			
Գ. Խուրշուդյան			
Ա.Հովհաննիսյան			

Համայնքապետ՝ Մ. Միսակյան

2018թվական
սեպտեմբեր 28
Գ. Ակնաշեն